ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2026թ. թիվ 310-Ա

ՎԱՔԱՌՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՀՆԻՁՈՐԻ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի մայիսի 11-ի թիվ 305-Ա որոշումը և հաշվի առնելով Վ.Քառյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հ.Մաթևոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հ.Մաթևոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ Վաղինակ Քառյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հ.Մաթևոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հ.Մաթևոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Վաղինակ Քառյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հ.Մաթևոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մայիսի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

2026-05-13 15:59:03 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 13
ք.Վանաձոր